ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

Հայաստանի Հանրապետության կապի նախարարության և Ռուսաստանի Դաշնության կապի նախարարության միջև էլեկտրական և փոստային կապի ասպարեզում համագործակցության մասին

Հայաստանի Հանրապետության կապի նախարարությունը և Ռուսաստանի Դաշնության կապի նախարարությունը, այսուհետ՝ Կողմեր,

համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության և Ռուսաստանի Դաշնության կառավարության միջև՝ Կապի հարցերով համագործակցելու մասին 1993 թվականի հուլիսի 1-ի Համաձայնագրի,

համարելով, որ կապի ասպարեզում փոխներգործությունը և համագործակցությունը պետք է զարգանան բարյացակամության և փոխօգնության հիման վրա,

հենվելով բարիդրացիական ավանդույթների վրա և ձգտելով դրանց հետագա զարգացմանը,

կամենալով հաստատել իրավական, տնտեսական և տեխնոլոգիական սերտ կապեր, Կողմերի միջև կապի միջոցների անխափան գործունեության ապահովման համար,

պայմանավորվեցին ներքոհիշյալի մասին.

Հոդված 1

Կողմերը, գործելով սեփական լիազորությունների և հնարավորությունների ծավալում, համաձայն Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության օրենքների պահանջների, կշարունակեն և կընդլայնեն համագործակցությունը փոստային կապի հեռուստահաղորդակցության, ռադիոյի և հեռուստատեսության, արբայնակային համակարգերի, մամուլի տարածման ասպարեզում:

Հոդված 2

Կողմերը իրենց հարաբերությունները կկառուցեն Համաշխարհային փոստային միության ակտերի դրույթներին և էլեկտրակապի միջազգային միության երաշխավորություններին խստիվ համապատասխան, որոնք կանոնակարգում են հարաբերությունները պետությունների և դրանց կապի վարչությունների, այդ միությունների անդամների միջև, ինչպես նաև՝ երկկողմ համաձայնագրերով և պայմանագրերով:

Հոդված 3

Կողմերը, փոստային և էլեկտրական կապի, ինչպես նաև կապի ծառայությունների համար փոխադարձ հաշվարկների կարգի մեջ բոլոր փոփոխությունների մասին պետք է միմյանց հայտնեն փոփոխությունների ենթադրվող օրվանից 3 ամիս առաջ:

Կողմերը երաշխավորում են բոլոր տեսակների փոստային առաքումների և հատուկ կապի, էլեկտրակապի ցանցերով հաղորդումների, ռադիո և հեռուստատեսային ծրագրերի ազատ տարանցումն իրենց տարածքներով:

էլեկտրակապի ցանցերով հաղորդագրությունների տարանցման բաց թողնելու կարգը որոշվում է հետագայում՝ առանձին համաձայնագրով:

Հոդված 4

Կողմերը միմյանց դեմ չեն կիրառի խտրական միջոցներ, որոնք կխոչընդոտեն կամ կբարդացնեն Կողմերի կապի վարչությունների գործունեությունը երրորդ երկրներում և միջազգային կազմակերպություններում:

Հոդված 5

Կողմերը միմյանց աջակցություն կցուցաբերեն՝ մյուս Կողմի ռադիո և հեռուստատեսային ծրագրերի և պարբերական մամուլի բաժանորդագրմամբ տարածմանը և մանրածախ առևտրի կազմակերպմանը իր պետության տարածքում, Կողմերի կառավարությունների կամ նրանց համապատասխան գերատեսչությունների միջև և պայմանագրերով սահմանված ծավալներով:

Հոդված 6

Կողմերը կաջակցեն Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության կապի ձեռնարկությունների վարչություններին՝ կնքելու փոխհամագործակցությունների, փոխծառայությունների և փոխհաշվարկների մասին փոխադարձ ուղիղ պայմանագրեր:

Հոդված 7

Կողմերի կապի ծառայություններ տրամադրող բոլոր մասնակից ձեռնարկությունները սպառողի առաջ կրում են հավասար պատասխանատվություն՝ ժամանակին և որակյալ սպասարկման համար:

Միջազգային էլեկտրակապի անորակ աշխատանքի համար բողոքների քննարկման կարգը որոշվում է առանձին փաստաթղթով:

Հոդված 8

Կողմերը պայմանավորվեցին կապի ձեռնարկությունների հեռախոսավարների, հեռագրիչների, տեխանձնակազմի, փոստի աշխատողների միջև ծառայողական տեղեկության, ինչպես նաև ծառայողական փաստաթղթերի փոխանակման համար օգտագործել ռուսաց լեզուն:

Կողմերի երկրների միջև ուղարկվող փոստային առաքումների և հեռագրերի հասցեները լրացվում են ռուսերենով:

Հոդված 9

Կողմերը միջպետական հաղորդագրությունների և տեղեկությունների հաղորդման տեխնոլոգիական գործընթացներում կապի ձեռնարկություններում օգտագործում են մեկ ընդհանուր հաշվարկահաշվետվային ժամանակ՝ «Մոսկովյան»:

Հոդված 10

Կողմերը ցուցաբերում են փոխադարձ աջակցություն միջազգային հեռախոսահեռագրական և փոստային փոխանակումների մշակման, ինչպես նաև հատուկ դրություններում ֆելդերգական և հատուկ կապի կազմակերպման հարցերում:

Հոդված 11

Կողմերը փոխադարձ աջակցություն են ցուցաբերում տարերային աղետների և արտակարգ իրավիճակների դեպքում առաջացած էլեկտրական և փոստային կապի միջոցների վնասվածքների վերականգնման գործում:

Հոդված 12

Կողմերը որոշեցին, որ կապի ասպարեզում հարաբերություններից ծագած վեճերը ենթադասվում են միջնորդ դատարաններին, եթե դա նախատեսվում է Կողմերի պետությունների միջև համաձայնագրերով: Կողմերի երկրների միջև համաձայնագրերում այդ հարցի լուծման

բացակայության դեպքում Կողմերի կապի ձեռնարկությունները վեճերի ենթադասությունը որոշում են ինքնուրույն՝ կնքվող պայմանագրերով:

Հոդված 13

Կողմերի համաձայնությամբ սույն Համաձայնագիրը կարող է փոփոխվել կամ լրացվել:

Հոդված 14

Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում այն ստորագրելու օրվանից և գործում է մինչև 1994 թվականի դեկտեմբերի 31-ը:

Հետագայում, եթե Կողմերից ոչ մեկը մինչև Համաձայնագրի գործողության ավարտման տարվանից հետո գալիք տարվա հունվարի 1-ը տեղյակ չպահի մյուս Կողմին սույն Համաձայնագրի փոփոխությունների, լրացումների և լուծման մասին, դրա գործողությունն ինքնաբերաբար կերկարաձգվ՝ ամեն անգամ՝ երեքամյա ժամկետով:

Կնքված է Մոսկվա քաղաքում 1993 թվականի հուլիսի 1-ին, երկու բնօրինակով, յուրաքանչյուրը՝ հայերեն և ռուսերեն, ընդ որում երկու տեքստերն էլ ունեն հավասար ուժ:

Համաձայնագիրն ուժի մեջ է մտել 1993 թվականի հուլիսի 1-ից: